



ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ՓՎ/137-2023

ՀԵՌԱԿԱ՝ ԳՐԱՎՈՐ ՀԱՐՑՄԱՆ ԿԱՐԳՈՎ ԿԱՅԱՑԱԾ՝ ՀՅՈՒՄԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ, Մ-6, ՎԱՆԱՁՈՐ-ԱԼԱՎԵՐԴԻ-ՎՐԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԱՎՏՈՄՈՒԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀԻ (ԿՄ 38+450 ԿՄ 90 + 191 ՀԱՏՎԱԾ) ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԵՎ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ, ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԵՎ ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

22 հունիսի 2023 թվական

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Փոխվարչապետ

Տ. Խաչատրյան

ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐ

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար

Գ. Սանոսյան

Շրջակա միջավայրի նախարար

Հ. Սիմիոյան

Արդարադատության նախարար

Գ. Մինասյան

Էկոնոմիկայի նախարար

Վ. Քերոբյան

Կադաստրի կոմիտեի ղեկավար

Ս. Թովմասյան

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ

Ք. Ղալեցյան

Փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանի խորհրդական «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի գործադիր տնօրեն

Ա. Սարգսյան

Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ

Գ. Ավետիսյան

«Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի տնօրենի տեղակալ, քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրի ղեկավար

Լ. Հովհաննիսյան

Ն. Մարտիրոսյան

Խորհրդի նիստն անց է կացվել ա.թ. հունիսի 22-ին հեռակա՝ գրավոր հարցման կարգով: ՀՀ փոխվարչապետ, կառավարման խորհրդի նախագահ Տիգրան Խաչատրյանի՝ ա.թ. հունիսի 22-ի թիվ 03.1/03.62/21315-2023 գրությամբ Խորհրդի անդամներին ուղարկվել են օրակարգը և կից նյութերը՝ Խորհրդի անդամներին առաջարկվելով իրականացնել գրավոր քվեարկություն:

Խորհրդի անդամների կողմից օրակարգի վերաբերյալ առարկություններ կամ առաջարկություններ չեն ստացվել, ուստի օրակարգը համարվել է հաստատված:

Համաձայն Խորհրդի աշխատակարգի 13-րդ կետի և սույն նիստի գրավոր քվեարկության արդյունքների՝ Խորհուրդն օրակարգում ներառված հարցերի վերաբերյալ ընդունեց հետևյալ որոշումը.

Օրակարգային 1-ին հարց՝ Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի» Տրանշ 4, Միսիան-Քաջարան 60կմ նոր ճանապարհահատվածի (ներառյալ Բարգուշատի թունելի) կառուցման վերաբերյալ

Որոշվեց՝

1. Հաստատել Ծրագիրը մեկ միասնական չափաբաժնով իրականացնելու մոտեցումը: Առաջարկել ՎՋԵԲ-ին, ԱԶԲ-ին և ԵՆԲ-ին շարունակելու գնման գործընթացը նախատրակավորման արդյունքների հիման վրա:
2. Պահանջել ՎՋԵԲ-ից երկարաձգելու նախատրակավորման փուլի վավերականության ժամկետը մինչև 2023 թ. դեկտեմբերի 30-ը: Նախատրակավորման գնահատման հաշվետվության վերաբերյալ ստանալ ՎՋԵԲ-ի հաստատումը: Միաժամանակ պարզաբանում ստանալ ԱԶԲ-ից նախատրակավորման գործընթացի ընդունելի լինելու վերաբերյալ:
3. Բարգուշատի թունելի երկայնքով իրականացնել լրացուցիչ երկրաբանական հետազոտություն, որի իրականացումը հանձնարարել IRD Engineering ընկերությանը: Հաշվի առնել, որ երկրաբանական հետազոտությունները պետք է անցկացվեն մրցութային գործընթացին զուգահեռ և որպես լրացուցիչ տեղեկատվություն տրամադրվեն մրցույթի մասնակիցներին:
4. Հավանություն տալ Խորհրդի դիրքորոշումը ներկայացնող գրության նախագծին և հանձնարարել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար Գնել Սանոսյանին՝ պաշտոնապես ներկայացնել հաստատված դիրքորոշումը դռնոր կազմակերպություններին:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ**

ՏԻԳՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ